ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱԶՈ» (ՆԱԺԱՐՈՒՅԺԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 88 - 89 (16386) ՇԱԲԱԹ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՄԵՆՔ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑՐԻՆՔ ԵՐԿՈՒ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻՈՎ»

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԿԿԱԶՄԻ 10,145 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ

Նոյեմբերի 27-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի գործադիր իշխանության հերթական նիստը, որտեղ խոսվեց հաջորդ տարվա պետբյուջեի առաջնահերթությունների մասին:

ՀՈՒԼԻՍԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԴԱՌՆԱ 180 ԼԱՐԻ

Կառավարության նիստում Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ, բյուջեի նախագծում իրականացված փոփոխություններից հետո, 2016 թվականի պետության գլխավոր ֆինանսական փաստաթղթում բյուջեն սահմանվել է 10 միլիարդ 145 միլիոն լարիի չափով:

«Սա այն պարամետրն է, որն արդեն հաշվարկ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նոյեմբերի 26-ին Թբիլիսիում անցկացվեց «Արեւելյան գործընկերության» երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական երկխոսության վեցերորդ հանդիպումը, որին մասնակցեց ընդլայնման հարցերով եվրահանձնակատար եւ արտաքին հարաբերությունների եվրոպական ծառայության գլխավոր քարտուղարի տեղակալ Հելգա Շմիդտը: Հանդիպման մասնակիցների թվում էր նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Հանդիպմանը գլխավոր ուշադրությունը հատկացվեց Ռիգայի գագաթաժողովում սահմանված գերակայությունների իրագործման գործընթացներին եւ եվրոպական հարեւանության քաղաքականության վերանայման արդյունքում համագործակցության խորացման հեռանկարներին:

Ինչպես տեղեկացրին Վրաստանի ԱԳ նախարարությունից, արտաքին գերատեսչությունների ղե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌԱՆՁՆԱՑՎԵՑԻՆ ԵՐԵՔ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արեւելյան գործընկերության» ոչ պաշտոնական երկխոսության վեցերորդ հանդիպմանը ուշադրությունը բեւեռվեց ոչ միայն քաղաքական համատեքստի, այլեւ առողջապահության հարցերի վրա: Դրանց քննարկման համար անցկացվեց նաեւ ծրագրին մասնակից երկրների առողջապահության ոլորտի ղեկավարների հանդիպումը, որին մասնակցեց Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը:

Հանդիպմանը, ինչի կապակցությամբ Թբիլիսի էր ժամանել նաեւ առողջապահության հարցերի եվրոպական հարեւանության քաղաքականության վերանայման արդյունքում համագործակցության խորացման հեռանկարներին:

Ինչպես տեղեկացրին Վրաստանի ԱԳ նախարարությունից, արտաքին գերատեսչությունների ղե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է»

Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ, Վրաստանի Նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ նախագահը կոչ արեց պաշտպանել կանանց իրավունքները:

Նախագահի խոսքերով, իշխանության մշտական հոգատարության առարկան կանանց վիճակի բարելավումն է, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում առաջնային պլան նրանց մղումը: «Կանանց վիճակի մասին հոգատարությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում եւ առանձնապես քաղաքականությունում նրանց առաջմղումը իմ ջանքերի առարկան է: Հենց դա եմ համարում կանանց նկատմամբ բռնության վերացման ամենաարդյունավետ ուղին»,- հայտարարեց նախագահը: Նրա խոսքերով, 2015 թվականը Վրաստանում հայտարարվել է կանանց տարի: «Ցավոք, վերջին տարիներին Վրաստանում հրատապ հիմնախնդրի է վերածվել ընտանեկան բռնությունը: Օրինակ, 2014 թվականին այդ բռնության զոհ է դարձել 22 մարդ: 2014 թվականի վերջին ընտանեկան բռնությունը քրեական օրենսգրքում առանձնացվեց որպես առանձին հանցագործություն»,- հայտարարեց նախագահը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ՏԱՐԱՆՑԻԿ ԵՐԿԻՐ Է ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՏԵՂ Է ԶԲԱՂԵՑՆՈՒՄ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Նոյեմբերի 27-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ եվրակոմիսար Յոհաննես Հանի, երկրում հավաստագրված դիվանագիտական կորպուսի եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:



Բացելով հանդիպումը՝ Գիորգի Մարգվելաշվիլին նշեց, որ Վրաստանին կարեւորագույն դեր է տրվում այն միասնական եւ ամբողջական պատկերում, որն այսօր իրենից ներկայացնում է Եվրոպան: «Ելնելով դրանից՝ Վրաստանը կարեւորագույն դեր է կատարում եվրոպական հարեւանության ոլորտում: Այդ առումով, երկիրը հասել է զգալի առաջընթացի, որոնցից առաջինը Վրաստանի տարանցիկության հնարավորություններն են: Վրաստանը միմյանց հետ է կապում տնտեսական կարեւորագույն միջավայրերը, դրանք տնտեսական կարեւորագույն նախագծերն են, որոնցում Վրաստանը մասնակցում է իր անկախության առաջին օրերից: Դրանք էներգատարների, տրանսպորտի հետ կապված նախագծերն են: Կարեւոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ մենք ազատ առեւտրի պայմանակարգ ենք ձեւակերպել ոչ միայն Եվրոպայի, այլեւ խորհրդային նախկին հանրապետությունների ու Թուրքիայի հետ: Դա եւս լրացուցիչ ազդակ է համագործակցության խորացման համար»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿ-Ի ՄԻՋԵՎ

Նոյեմբերի 21-ին Վրաստանի կառավարության եւ ՄԱԿ-ի միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանագիր:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ Վրաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Նիլ Սքոտը ստորագրեցին 2016-2020 թվականների համար կայուն զարգացմանն ուղղված Վրաստանի եւ ՄԱԿ-ի միջեւ համագործակցության ծրագիրը: Ծրագիրը նախատեսում է համագործակցության հինգ հիմնական ուղղությունները՝ ժողովրդավարական կառավարումը, զբաղվածությունը, կենցաղային պայմաններն ու սոցիալական պաշտպանությունը, կրթությունը, առողջապահությունը եւ հասարակական անվտանգությունն ու կենսունակությունը:

Փաստաթղթի ստորագրմանը ներկա էին Վրաստանի կառավարության եւ խորհրդարանի անդամներ, հրավիրված հյուրեր:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

«Արեւելյան գործընկերության ոչ պաշտոնական երկխոսության վեցերորդ հանդիպման շրջանակներում, կայացավ Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը:

Ողջունելով Էդվարդ Նալբանդյանին՝ Գիորգի Կվիրիկաշվիլին շնորհակալություն հայտնեց Արեւելյան գործընկերության արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը մասնակցելու հրավերն ընդունելու եւ Թբիլիսի այցելելու համար:

Վրաստանի արտգործնախարարությունում դեմ առ դեմ կայացած հանդիպմանը, կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Հայաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կավարների հանդիպմանը, հիմնական շեշտը դրվեց Ռիգայի գագաթաժողովի արդյունքներին եւ այդ գագաթաժողովում սահմանված առաջնահերթությունների կատարման, հարեւանության քաղաքականության վերանայման արդյունքում, համագործակցության խորացման հեռանկարներին: Քննարկվեց նաեւ տարածաշրջանային իրավիճակի եւ կայունության ու անվտանգության մարտահրավերների թեման: Ինչպես հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանը կրկին անգամ հավաստեց իր աջակցությունը Արեւելյան գործընկերության ձեւաչափին, պատրաստակությունը՝ նշանակալից ավանդ ներդնելու համագործակցության շրջանակներում հարաբերությունների զարգացման գործում:

Հանրագումարելով Թբիլիսիում անցկացված ԱԳ նախարարների հանդիպման արդյունքները՝ Եվրամիության հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով եվրակոմիսար Յոհաննես Հանը, ուշադրությունը բեւեռեց այցեգրային պայմանակարգի ազատականացման գործընթացում Վրաստանի առաջընթացի վրա: «Մենք խոսեցինք այն արդյունքների մասին, որին հանգել ենք մեր համագործակցությամբ: Եվ այդ գործընթացը շարունակվում է, եւ ես համոզված եմ առաջիկա առաջընթացի հարցում»,- հայտարարեց եվրակոմիսարը:

ԱՌԱՆՁՆԱՑՎԵՑԻՆ ԵՐԵՔ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պայքարին, իմունականխարգելմանը վերաբերող հարցեր: Անդրադարձան ԱՀԿ ծխախոտի վերահսկման շրջանակային կոնվենցիայի իրականացման ընթացքին:

Իր հերթին, Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն նշեց, որ առողջապահությանը նվիրված թեմայի քննարկմանը, առաջին պլան մղվեցին միջազգային կարգավորումների երեք ռազմավարական ուղղությունները: «2005 թվականին ձեւավորվեցին առողջապահության միջազգային կարգավորման ռազմավարական ուղղությունները: Այս հանդիպմանը քննարկվեցին երեք նման ուղղությունները: Դրանք են՝ վարակիչ հիվանդությունների, համաճարակների տարածման նկատմամբ համապատասխան արձագանքը, պատվաստումների թվաքանակի ավելացումը եւ ծխախոտի օգտագործման նվազեցման եւ վերահսկողության ռազմավարությունը: Հանդիպման գլխավոր նպատակներից էր նաեւ փորձի փոխանակումը, եւ այդ ամենն իրականացվեց առողջապահության հարցերով եվրակոմիսար Վիտյանիս Անդրյուկայտիսի հովանու ներքո»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԻՐԱԿԼԻ ՇՈԹԱՁԵԻՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԵՐԿՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Նոյեմբերի 27-ին Վրաստանի խորհրդարանը իր լիագումար նիստում երկրի գլխավոր դատախազի պաշտոնում հաստատեց 32-ամյա Իրակլի Շոթաձեի թեկնածությունը: Նրա օգտին քվեարկել է 82, դեմ՝ 15 պատգամավոր:

Մինչեւ խորհրդարանի կողմից թեկնածության հաստատումը, նոյեմբերի 19-ին գլխավոր դատախազի պաշտոնում Իրակլի Շոթաձեի թեկնածությունը առաջադրել էր դատախազական խորհուրդը: Սույն թեկնածությունը հավանության էր արժանացել կառավարության կողմից եւ այն ներկայացվել խորհրդարանի հաստատմանը:

Գլխավոր դատախազի պաշտոնում Իրակլի Շոթաձեն կփոխարինի 34-ամյա Գիորգի Բադաշվիլուն:

Նշենք, որ մինչ նոր նշանակումը Իրակլի Շոթաձեն 2013 թվականի նոյեմբերից զբաղեցնում էր գլխավոր դատախազի առաջին տեղակալի պաշտոնը: Նա դատախազության համակարգում աշխատանքն սկսել է 2006 թվականից: 2010-2013 թվականներին աշխատել է Վրաստանի ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությունում:

Իրակլի Շոթաձեն Վրաստանի գլխավոր դատախազի պաշտոնում ընտրվել է վեց տարի ժամկետով:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի երկկողմ համագործակցության կարեւոր հարցերը, մեկ անգամ եւս ընդգծեցին երկու երկրների բարիդրացիական փոխհարաբերությունները:

Հանդիպմանը քննարկվեցին Հայաստանի նախագահի՝ Թբիլիսի կատարած այցելության ընթացքում երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը, կարեւորվեցին բարձրաստիճան փոխայցելությունները, արտգործնախարարությունների միջեւ խորհրդատվությունների անցկացումը, միջազգային կառույցներում փոխգործակցության սերտացումը:

Նախարարներն անդրադարձան տարածաշրջանային հրատապ խնդիրներին: Այս համատեքստում էդվարդ Նալբանդյանն իր վրաց գործընկերոջը ներկայացրեց ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերը:

ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՔԱՅԼ

ԹՈՒՐՔԱԿԱՆ F-16 ԿՈՐԾԱՆԻՉԸ ՀՐԹԻՌԱԿՈԾԵԼ Է ՌՈՒՍԱԿԱՆ «ՍՈՒ-24» ՌՄԲԱԿՈԾԻՉԸ

Ինչհես տեղեկացված է ընթերցողը, Ռուսաստանի կառավարությունը, Սիրիայի կառավարության խնդրանքով, սեպտեմբերի 30-ից մարտական գործողություններ (օդային հարվածներով) ծավալեց Սիրիայի տարածքում գործող այսպես կոչված «Իսլամական պետության» գրոհայինների դեմ:

Նոյեմբերի 24-ին ռուսական ռմբակոծիչը խփվել է Սիրիայի երկնքում, թուրքական F-16 կործանիչից արձակված հրթիռով: Այս միջադեպը լայն արձագանք է առաջացրել աշխարհում:

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ. «ԴԱ ԹԻԿՈՒՆՔԻՑ ՀԱՍՑՎԱԾ ՀԱՐՎԱԾ ԷՐ»

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հայտարարությամբ, ինքնաթիռը թուրքական F-16 կործանիչից արձակված «օդ-օդ» դասի հրթիռով խոցվել է այն ժամանակ, երբ այն գտնվում էր 6 հազար մետր բարձրության եւ Թուրքիայի սահմանից մեկ կիլոմետր հեռավորության վրա: Ռուսական ինքնաթիռն ընկել է Թուրքիայի սահմանից 4 կիլոմետր հեռավորության վրա: Ռուսաստանի նախագահը դա որակել է «հարված թիկունքին», որը հասցրել են ահաբեկիչների հանցակիցները: «Սու-24»-ի կործանումը դուրս է գալիս ահաբեկչության դեմ մղվող պայքարի շրջանակներից, սա հարված է, որը ՌԴ-ին թիկունքից հասցրին ահաբեկիչների հանցակիցները»,- նշեց Վլադիմիր Պուտինը եւ հավելեց, որ ռուսական ինքնաթիռի կործանման պատճառով ՆԱՏՕ-ի գծով գործընկերներին Թուրքիայի դիմումը Դաշինքը ԴԱԻՇ-ին ծառայեցնելու փորձ է հիշեցնում:

Ռմբակոծիչի կատապուլտով դուրս նետված երկու օդաչուներին օդում գնդակոծել են ինքնաթիռի ընկնելու վայրում Սիրիայի կառավարական ուժերի դեմ կռվող գրոհայինները: Նրանք էլ համացանցում տեղադրել են ռուս օդաչուներին գնդակոծելու պահը պատկերող տեսանյութ: Սպանվել է ինքնաթիռի հրամանատարը, իսկ շտուրմանին դեպքի վայրում անցկացրած հատուկ գործողության արդյունքում ռուսական հատուկ ջոկատայինները կարողացել են փրկել:

Միջադեպը բացասական արձագանք է առաջացրել Ռուսաստանում: Երկրի տարբեր քաղաքներում՝ Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Ուլյանովսկում, բազմամարդ ցույցեր են անցկացվում թուրքական դեսպանության եւ հյուպատոսությունների շենքերի մոտ:

ՌԴ կառավարությունը սահմանափակումներ է դնում Թուրքիայից ապրանքների ներկրման գործում: Կանգնեցվելու կամ անվավեր են ճանաչվելու ռուս-թուրքական համատեղ ներդրումային նախագծերի կատարումը: Արդեն Վրաստանի տարածքից Ռուսաստան մտնող թուրքական բեռնատարները ռուս սահմանապահները ետ են վերադարձնում Վերին Լարսի սահմանակետից: Ռուսաստանի Դաշնային Խորհրդում առաջարկում են ժամանակավորապես կասեցնել Թուրքիայի հետ բոլոր կապերը: Ռուսաստանը չեղյալ է հայտարարել Թուրքիայի հետ անայցեգրային պայմանակարգը:

Ռուսական տուրիստական ընկերությունները դադարեցրել են Թուրքիա զբոսաշրջության ուղեգրերի ձեւակերպումները, Թուրքիայում գտնվող ռուս զբոսաշրջիկներին շտապ կարգով հայրենիք վերադառնալու կոչ է արվել:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱ. «ԹՈՒՐՔԻԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԻՐ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ»

Ռուսաստանը եւ Թուրքիան պետք է քննարկեն ռուսական «Սու-24» ինքնաթիռի հետ կապված միջադեպը եւ քայլեր ձեռնարկեն էսկալացիա թույլ չտալու համար: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

«Կարծում եմ՝ այժմ շատ կարեւոր է, որպեսզի ՌԴ-ն եւ Թուրքիան խոսեն միմյանց հետ ու պարզեն, թե ինչ է կատարվել, եւ քայլեր ձեռնարկեն, որպեսզի թույլ չտան հետագա էսկալացիա»,- ասել է Օբաման, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ համատեղ ասուլիսի ժամանակ:

«Թուրքիան, ինչպես եւ յուրաքանչյուր պետություն, իրավունք ունի պաշտպանելու իր օդային տարածքը»,- հավելել է Օբաման:

ՆԱՏՕ-Ն ՍԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԹՈՒՐՔ ԴԱՇՆԱԿՑԻՆ

ՆԱՏՕ-ն սատարում է իր դաշնակից Թուրքիային: Սիրիայում ռուսական օդանավի կործանման կապակցությամբ Հյուսիսատլանտյան դաշինքի արտահերթ նիստից հետո նման հայտարարությամբ է հանդես եկել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը՝ կոչ անելով պաշտոնական Անկարային եւ Մոսկվային մեղմել լարվածությունը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը տեղեկացրել է, որ միջադեպի վերաբերյալ զրուցել է Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուի հետ, իսկ Թուրքիայի դեսպանը Հյուսիսատլանտյան դաշինքին տեղեկացրել է վերջին զարգացումների մասին:

«ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆՔ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ»

Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, մեկնաբանելով Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ վերջին ժամանակներում զարգացող իրադարձությունները, հայտարարեց, որ իրավիճակը սպառնալի է: «Շատ ծանր վիճակ է: Մենք հետեւում ենք իրադարձությունների զարգացմանը եւ շատ մտահոգ ենք: Սպասենք եւ տեսնենք, թե իրադարձությունները ինչ զարգացում կունենան»,- հայտարարեց Կախի Կալաձեն:

«Շատ դժվար է, երբ երկու հզոր հարեւանների միջեւ իրավիճակը սրվում է: Թեպետ հուսով եմ, որ բանականությունը կհաղթի, եւ կկանխվի իրավիճակի է'լ ավելի սրումը: Լարվածությունը տնտեսական զարգացմանը չի նպաստի ոչ մեր երկրում եւ ոչ էլ այն երկրներում, որոնք մեր առեւտրական գլխավոր գործընկերներն են»,- հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:

ԻՍԼԱՄԻՍՏՆԵՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Վրաստանի պետանվտանգության ծառայությունը հետաքննություն է սկսել այն տեսագրության հայտնվելու կապակցությամբ, որում չորս երիտասարդներ սպառնում են նրանց, ովքեր «Վրաստանում «պայքարում են իսլամի դեմ»:

Առայժմ Վրաստանի պետանվտանգության ծառայությունում ձեռնպահ են մնում տեսագրության հայտնվելու հետ կապված հետագա մեկնաբանություններից:

Տեսագրության մեջ ինքնաձիգներով զինված երիտասարդները մուսուլմաններին են դիմում վրացերեն, տեսագրությունն ուղեկցվում է ռուսերեն տողատակով:

Ինչպես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, Վրաստանում ահաբեկչական սպառնալիքի իրականացման էական պատճառներ չկան: Նրա խոսքերով, իրավապահ մարմիններն ու հատուկ ծառայությունները լրիվությամբ մոբիլիզացված են եւ ջանք չեն խնայի երկրի անվտանգության ապահովման համար:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ

Նոյեմբերի 20-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնականի տեղակալ Բրիջիթ Բրինքի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանի անվտանգության հետ կապված վիճա-

Նախագահի վարչակազմում կայացած հանդիպմանը ներկա էին Վրաստանում Միացյալ Նահանգների դեսպան Յան Քելլին, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, Վրաստանի նախագահի խորհրդականները:

Հանդիպմանը կողմերը խոսեցին երկրում ընթացող ժողովրդարանական բարեփոխումների, ընտրությունների նախապատրաստման գործընթացի, ինչպես նաեւ եվրոպական եւ եվրաատլանտյան ինստիտուտներին ինտեգրման գործընթացի մասին:

Կողմերը խոսեցին նաեւ Ռազմավարական գործընկերության խարտիայի կարեւորության մասին, որը կնքվել է Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ, նշեցին համագործակցության խորացման մեծ ներուժը:

Հիշեցնենք, որ Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական գործընկերության խարտիան ստորագրվել է 2009 թվականի հունվարի 9-ին, Վաշինգտոնում: Խարտիայի շրջանակներում, 2009 թվականի հունիսին աշխատանքային խմբեր են ստեղծվել մի շարք ուղղություններով:

Փաստաթուղթը նախատեսում է գործընկերային կապերի եւ համագործակցության ընդլայնում պաշտպանության եւ անվտանգության, տնտեսության, էներգետիկայի, ժողովրդավարական բարեփոխումների, դիվանագիտության եւ մշակույթի ոլորտներում:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Վրանստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, Ադրբեջան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, հանդիպումներ ունեցավ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի, Ադրբեջանի սահմանի պաշտպանության պետական ծառայության ղեկավար Էլչին Գուլիեւի, արտակարգ իրավիճակների նախարար Քամալեդին Հեյդարովի, պաշտոնական այլ անձանց հետ: Հանդիպումներում քննարկվեցին տարածաշրջանային անվտանգության, այդ թվում՝ կազմակերպված հանցագործության եւ ահաբեկչության դեմ պայքարի գործում համագործակցության ակտիվացման հարցերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆՔ ՉԵՌՆԱՐԿՈՒՄ, ՈՐՊԵՍԶԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԱՊԱՌԻԿ ԴԵՂՈՐԱՅՔ ՉԳՆԵՆ»

Ինչպես տեղեկացրին դեղագործական ընկերությունում, գնորդները մուծելու են միայն դեղի գինը, իսկ ապառիկության հետ կապված ծախսերը ստանձնում է GPC-ին:

Ընթացիկ տարվա նոյեմբերից առաջին անգամ Վրաստանում դեղատների GPC ցանցում ներդրվել է դեղորայքը ապառիկով գնելու համակարգը: Մեկնաբանելով ոլորտում ներդրած նորամուծությունը՝ Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտանության նախարար Դավիթ Սերգեեենկոն հայտարարեց, որ հնարավորինս կարվի, որպեսզի բնակչությունը ապառիկով չգնի առաջին անհրաժեշտության դեղորայքը: Նախարարի խոսքերով, ճիշտ է, վերջին ժամանակներս առողջապահության ոլորտի բարեփոխումների առումով դրական տեղաշարժեր են նկատվել, սակայն առջեւում անելիքները շատ են: «Մնացել է մեկ կարեւոր մարտահրավեր. մեծացնել ամբուլատորային դեղորայքի նկատմամբ բնակչության մատչելիությունը, այսինքն՝ դեղերով ապահովել նրանց, ովքեր այն ընդունում են տնային պայմաններում: Հիվանդանոցներում դեղորայքի համար վճարում է պետությունը»,- հայտարարեց Դավիթ Սերգեեենկոն:

Անդրադառնալով ապառիկով դեղորայքի գնման թեմային՝ նախարարը նշեց, որ ինքը տեղեկացված չէ, թե ինչպես է ծագել նման գաղափարը: «Բնականաբար, նման կարեւոր արդյունքի համար բոլոր միջոցներն ընդունելի են, սակայն բնակչությանը կարող եմ ասել, որ նման անհրաժեշտություն չի ծագի, քանի որ նախկինում էլ կենսաթոշակառուները ծանր վիճակի մեջ էին հայտնվում կենսաթոշակի հաշվին վարկեր ստանալիս: Հետեւաբար, մենք հնարավորինս կանենք, որպեսզի թեթեւացնենք բնակիչների վիճակը, որպեսզի նրանք ստիպված չլինեն ապառիկով գնել առաջին անհրաժեշտության դեղորայքը»,- հայտարարեց Դավիթ Սերգեեենկոն:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ

Այս տարի էլեկտրաէներգիայի սակագնի վերանայում Թբիլիսիում եւ տարածաշրջաններում նախատեսված չէ:

Այդ մասին Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում, «Վրաստանի պետական էներգահամակարգի» եւ ԹԷԼԱՍԻ-ի ներկայացուցիչների հետ հանդիպմանը, հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն:

Հանդիպմանը «Վրաստանի պետական էլեկտրաընկերությունը», ԹԷԼԱՍԻ-ին, «Էներգո Պրո Ջորջիան» եւ մյուս էներգաընկերությունները ներկայացրին իրենց կատարած աշխատանքի հաշվետվությունը:

ՈԼՈՐՏ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՒՄ Է ԱԳՐՈՎԱՐԿԻ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, ներկայացնելով նախարարության եռամյա գործունեության արդյունքները, հայտարարեց, որ հաջողությամբ է ընթանում արտոնյալ ագրովարկի ծրագիրը:

Նրա խոսքերով, 2013 թվականից մինչ օրս, ծրագրի շրջանակներում տրվել է 642.488.095 լարիի եւ 163.176.553 դոլարի վարկ: Նախարարի հավաստմամբ, ոլորտի ձեռներեցների եւ ֆերմերների ֆինանսական մատչելիության հարցի կարգավորման արդյունքում, ներկա դրությամբ, արտոնյալ ագրովարկ է ստացել շուրջ 25200 ֆերմեր: Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում, ֆինանսավորվել է 139 նոր ձեռնարկություն եւ ընդլայնվել՝ 665-ը: Նոր արտադրություններում ստեղծվել է 3500 աշխատատեղ:

Անդրադառնալով «Արտադրի'ր Վրաստանում» նախագծին՝ նախարարը նշեց, որ, ծրագրի շրջանակներում, վարկի տեսքով տրվել է 18.029.298 դոլարի գումար: Այդ գումարով ֆինանսավորվել են կաթի վերամշակման, թեյի արտադրության, անասնակերի արտադրության, մրգերի վերամշակման, թռչնաբուծական, ջերմոցային տնտեսությունները:

Նախարարը անդրադարձավ նաեւ ագրոապահովագրման նախագծին: Նրա խոսքերով, 2014-2015 թվականներին ագրոապահովագրական պոլիսներ է տրվել 27 հազար ֆերմերի: Օթար Դանելիան նշեց, որ տարբեր մշակաբույսերի ապահովագրության համար առանձնացվել է 180 միլիոն լարի: Ապահովագրվել է 23132 հեկտար հող, դրա համար հատկացվել է 13.543.034 լարի:

Խոսելով 2014 թվականից գործող վերամշակման արտադրությունների համաֆինանսավորման նախագծի մասին՝ Օթար Դանելիան նշեց, որ ծրագրի շրջանակներում հաստատվել է 18.335.406 դոլարի 28 նախագիծ, որոնց պետական համաֆինանսավորումը կկազմի 7.199.004 դոլար: Նախագծի շրջանակներում, ֆինանսավորում կստանա 11 նոր ձեռնարկություն:



ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ «ԳԻՈՐԳՈԲԱՆ»

Նոյեմբերի 23-ին Վրաստանը նշեց ավանդական «Գիորգոբան»՝ Սուրբ Գիորգիի օրը: Օրվա առիթով, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Թբիլիսիի Քաշվեթիի տաճարում մատուցեց հանդիսավոր պատարագ, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության եւ խորհրդարանի անդամները, հասարակայնության ներկայացուցիչներ:

Տոնի առթիվ, Վրաստանի հոգեւոր առաջնորդը վարչապետին նվիրեց սրբապատկեր:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Նոյեմբերի 24-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց Լատվիայի արտաքին գործերի նախարար Էդգարս Ռինկեւիչուսը:

Այցի շրջանակներում, հյուրի հետ հանդիպումներ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Վրաստանի ԱԳ նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

Հանդիպումներում կողմերը քննարկեցին երկու երկրների հարաբերությունները, անդրադարձ կատարեցին Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացին: Լատվիացի հյուրը բարձր գնահատեց եվրաինտեգրման ուղղությամբ Վրաստանի ձեռքբերումները եւ վստահություն հայտնեց, որ Եվրամիությունը ըստ արժանվույն կգնահատի այդ ուղղությամբ Վրաստանի ջանքերը:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ը՝ ՖԵՐՄԵՐԻ ՕՐ

Այսուհետեւ, նոյեմբերի 20-ը Վրաստանում հայտարարվում է որպես ֆերմերի օր: Այս նախաձեռնությամբ հանդես եկավ Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան՝ ներկայացնելով իր գլխավորած գերատեսչության եռամյա գործունեության հաշվետվությունը:

«Էքսպո Ջորջիա» ցուցասրահում անցկացված շնորհանդեսին ներկա էին Վրաստանի կառավարության եւ խորհրդարանի անդամները, ոլորտի մասնագետները, դոնորական կազմակերպությունների ներկայացուցիչները եւ ֆերմերները:

Ինչպես հայտարարեց Օթար Դանելիան, երկրի կառավարության նպատակն է Վրաստանը վերածել գյուղմթերքներ արտահանող երկրի:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ

Թբիլիսիի մանկարտեզներում ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 30-ից: Մանկապարտեզների կառավարման գործակալության որոշմամբ, արձակուրդները կշարունակվեն 12 օր: Մայրաքաղաքի բոլոր մանկապարտեզներում ուսումնադաստիարակչական գործընթացը կվերսկսվի հունվարի 11-ից:

ԱՆՎՃԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ՝ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ

Նախկին բանտարկյալների վերականգնման եւ ռեսոցիալիզացման ծրագրի շրջանակներում, տեղերում պատրաստվում են անձնական էլեկտրոնային նոր վկայականներ: Վրաստանի արդարադատության նախարարի որոշմամբ, 1661 բանտարկյալների վկայականները կտրվեն անվճար: Պետապասարկումների զարգացման ազգային գործակալության աշխատակիցներն այդ աշխատանքը իրականացնում են աստիճանաբար, քրեակատարողական տարբեր հաստատություններում:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՄԵՆՔ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑՐԻՆՔ ԵՐԿՈՒ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վել է բյուջեի նախագծում, եւ որն էլ մենք ներկայացրել ենք խորհրդարանի հաստատմանը»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

Պատասխանելով վարչապետի այն հարցին, թե որքան էր երկրի բյուջեն 2012 թվականին, ֆինանսների նախարարը նշեց, որ այն կազմում էր մոտավորապես 8 միլիարդ լարի: «Իշխանափոխությունից հետո մենք բյուջեն ավելացրել ենք 2 միլիարդով»,- փաստեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Ֆինանսների նախարարի ընդգծմամբ, բյուջեի նախագծում նշանակալիցն այն է, որ ավելացվել են սոցիալական ծախսերը, առողջապահության ոլորտին հատկացվող միջոցները:

Ինչպես նշեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, 2016 թվականին պետբյուջեն սոցիալական կողմնորոշում կունենա: Մասնավորապես, 2016 թվականի հուլիսից կենսաթոշակները Վրաստանում կհասցվեն 180 լարիի: «Մենք այդ որոշումն ընդունել ենք: 2012 թվականից կենսաթոշակներն ավելացվել են 64 տոկոսով, իսկ դա 600 միլիոն լարի է»,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ նման պարագայում կարեւոր նշանակություն է ձեռք բերում կենսաթոշակային կուտակումների համակարգի ներդնումը, որն իրականացվելու է աստիճանաբար:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿՀԱՍՑՎԻ 600-700 ԼԱՐԻԻ

Շարունակելով բյուջեի սոցիալական կողմնորոշման թեմա՝ վարչապետը նշեց, որ առողջապահության ոլորտից

հետո ֆինանսական մեծ ռեսուրս է տրամադրվում կրթության ոլորտին: Վարչապետի հավաստմամբ, հաջորդ տարվա ապրիլից Վրաստանում մանկավարժների միջին աշխատավարձը կհասցվի 600-700 լարիի: «2015 թվականի ապրիլից սկսվեց ուսուցիչների աշխատավարձի բարձրացման երկրորդ փուլը եւ բազիսային աշխատավարձը կազմեց 405 լարի: Այս գործընթացը հաջորդ տարի էլ կշարունակվի»,- հայտարարեց վարչապետը:

Իր հերթին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն հայտարարեց, որ, 2012 թականի համեմատությամբ, ուսուցիչների բազիսային աշխատավարձն ավելացվել է 60 տոկոսով: «Չմոռանանք, որ բազիսային աշխատավարձի ավելացումը նշանակում է միջին աշխատավարձի ավելացում: 2016 թվականի ապրիլին մեզ մոտ ուսուցիչների բազիսային աշատավարձը կհասցվի 600-700 լարիի»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն եւ հավելեց, որ 2017 թվականի համար էլ ծրագրվում է ուսուցիչների աշխատավարձի ավելացում, այն հաշվով, որ մանկավարժի վարձատրությունը հավասարվի երկրում սահմանված միջին աշխատավարձի մեծությանը: Կառավարության նիստում վարչապետը, անդրադառնալով գիտնականների աշխատավարձի թեմային, նշեց, որ այսօրվա 150-200 լարի աշխատավարձը հաջորդ տարվա համար կավելացվի 200-300 տոկոսով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 3 ՄԻԼԻԱՐԴԻ ԲՆԱԳԻԾԸ

Կառավարության նիստում վարչապետը, անդրադառնալով առողջապահության ոլորտի ֆինանսավորման թեմային, նշեց, որ 2016 թվականի բյուջեում ոլորտի համար կառանձնացվի 3 միլիարդ 100 միլիոն լարի: «Եթե 2012 թվականին առողջապահության բյուջեն 1 միլիարդ 800 միլիոն էր, ապա 2016-ին այն կգերազանցի 3 միլիարդի սահմանագիծը: Միայն համընդհանուր առողջապահության ծրագրի համար, առանձնացվել է 570 միլիոն լարի, նաեւ հիշեցնեմ, որ երկրի բոլոր քաղաքացիներն ապահովագրված են: Պետությունն ինքն է մարում նրանց առողջապահության հետ կապված ծախսերը»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆ Է

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու համոզմամբ, իր գլխավորած կառավարության կարեւորագույն ձեռքբերումը «Բարձրալեռ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման մասին» օրենքի ընդունումն է:

Նոյեմբերի 27-ին անցկացված կառավարության նիստում վարչապետը հայտարարեց, որ 2016 թվականին բարձրալեռ տարածաշրջանների զարգացման համար առանձնացվելու է 20 միլիոն լարի: «Բարձրալեռ տարածաշրջանների մասին» ընդունած օրենքը մեր ընդհանուր խոստումն էր: Կարծում եմ, որ դա մեր կառավարության կարեւորագույն ձեռքբերումն է, քանի որ հստակորեն գիտակցում ենք, թե դա ինչ կարող է բերել բարձրալեռ տարածաշրջաններին»,- հայտարարեց վարչապետը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

2017 ԹՎԱԿԱՆԻՑ ԿԱՆՑՆԵՆՔ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՄՈԴԵԼԻՆ

ԱՅՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՒՄ ԿՏՐՎԻ ԱՊԱՀՈՎ ԱՊԱԳԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՄԱՀԱՃՈՒՅՔԻՑ ԱՆԿԱԽԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի կառավարությունը մտադիր է ներդնել կուտակային կենսաթոշակի համակարգը, որը հեռանկարում նախատեսում է ապագա սերունդներին կենսաթոշակային բարձր եկամուտներով ապահովում:

Ինչպես նշեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության կենսաթոշակային ոլորտի բարեփոխումների ծառայության պետ Օթար Չիծիկաշվիլին, վերոնշյալ բարեփոխումը կսկսվի 2017 թվականից:

Օթար Չիծիկաշվիլին մեզ հետ զրույցում ընդգծեց, որ ներկայումս կառավարությունը կիրարկում է սոցիալական կենսաթոշակային համակարգը, ինչը նախատեսում է աշխատանքային շուկայում ներգրավված քաղաքացիների կողմից մուծվող հարկերից կենսաթոշակային ծախսերի իրականացում: Այսինքն, մարդիկ, ովքեր աշխատում եւ հարկեր են վճարում, ավտոմատորեն կենսական միջոցներ են ապահովում երկրի տարեց բնակիչների համար: Հաշվի առնելով Վրաստանում տնտեսական սուղ ռեսուրսների առկայությունը՝ վերոնշյալ համակարգը բավարարվում է կենսաթոշակային տարիքի մարդկանց սոցիալական որոշակի օգնության ցուցաբերմամբ, ինչը եւ, բնականաբար, չի կարող ապահովել նրանց բարօրությունը:

Կիրարկվող մոդելի բացասական կողմերի մասին շատ է ասվել: Մասնավորապես, ընդգծվել է՝ աշխատանքային մեծ ստաժ ունեցողների եւ միայն տարիքից ելնելով կենսաթոշակառուների թոշակների մեծության տարբերությունը գրեթե հասցվել է զրոյի: ՄԱԿ-ի տվյալներով, 2050 թվականին Վրաստանում կենսաթոշակառուների թվաքանակը կկազմի երկրի բնակչության 25 տոկոսը, ինչը նշանակում է, որ մի քանի տասնյակ տարի հետո, պետությունը կենսաթոշակները միայն բյուջետային միջոցներից վճարել չի կարողանա: Հենց դրանով էլ պայմանավորված է կուտակային կենսաթոշակային մոդելի ներդրումը, ինչը անմիջականորեն մարդկանց կընձեռի բարեկեցիկ ծերություն ապահովելու հնարավորություն:

«Կուտակային համակարգի ներդրմամբ, ներկայումս գործող կենսաթոշակային համակարգը չի փոխվի, եւ բոլորը կունենան մատչելի կենսաթոշակ ստանալու հնարավորություն: Այսինքն, բոլոր այն քաղաքացիներին, ովքեր հասել են կենսաթոշակային տարիքի, կնշանակվի կենսաթոշակ, թեպետ կուտակային մեթոդից օգտվողներին կնշանակվի այն գումարը, որը նրանք կամավոր փոխանցում էին կենսաթոշակային հիմնադրամին»,- հայտարարեց Օթար Չիծիկաշվիլին եւ հավելեց. «Ցանկացած քաղաքացի, ով աշխատում է եւ աշխատավարձ ստանում, կարող է իր ցանկությամբ ամեն ամիս որոշակի գումար, օրինակ, աշխատավարձի 2 տոկոսը փոխանցել հիմնադրամին: Պետությունը դրան՝ որպես խրախուսում, կավելացնի եւս 2 տոկոս: 2 տոկոս կավելացնի նաեւ գործատուն, որի ձեռնարկությունում տվյալ քաղաքացին աշխատում է: Հետեւաբար, ստացվում է, որ կենսաթոշակային հիմնադրամ կամավոր փոխանցած 2 տոկոսի դիմաց, քաղաքացու հաշվի վրա լրացուցիչ փոխանցվում է եւս 4 տոկոս»:

Նրա խոսքերով, վերոնշյալ գումարով իրականացվում են ներդրումներ, դրանցով մարմնավորում են տարբեր նախագծեր, ինչը թույլ է տալիս ապահովել լրացուցիչ եկամուտների ստացում, որը նույնպես փոխանցվում է կենսաթոշակային հիմնադրամ:

Ինչպես նշեց Օթար Չիծիկաշվիլին, կենսաթոշակ ստացող քաղաքացուն բանկից գումարը դուրս բերելու հնարավորություն չի վերապահվում, բացառությամբ արտակարգ դեպքերի, երբ խոսքը նրա առողջական վիճակի կամ երեխաների ուսման վարձի վճարման մասին է, եւ նման այլ բացառիկ դեպքերի: «Այդ հարցը դեռեւս վերջնականապես չի հստակեցվել, թեպետ կարող եմ ասել, որ նման դեպքերը կլինեն իրոք բացառիկ: Մի խոսքով, հիմնադրամից գումարը հնարավոր կլինի դուրս բերել միայն բացառիկ դեպքերում»,- նշեց նա եւ հավելեց. «Հատկանշական է, որ կուտակային կենսաթոշակային հիմնադրամը տնօրինելու է մասնավոր կազմակերպությունը, որի գործունեությունը կգտնվի պետության վերահսկողության տակ: Այդ ընկերությունը կունենա ներդրումների իրականացման կոնկրետ ծրագիր, որը ներկայացվելու է իշխանությանը»:

Նրա խոսքերով, կուտակային համակարգի ներդրմանը նախորդելու է բազում նրբությունների հաշվարկում: Մասնավորապես, ազգային տարադրամի արժեզրկում, կուրսի անկում եւ այլն: «Այդ հիմնախնդիրների կարգավորման համար, մի կողմից կուտակվող գումարի մի մասը կփոխանակվի արտասահմանյան տարադրամով, մյուս կողմից, հիմնադրամից իրականացվող ներդրումների հաշվին պետք է ապահովվի լրացուցիչ եկամուտի ստացում»,- ասաց Օթար Չիծիկաշվիլին եւ հավելեց. «Քաղաքացին առավելագույնս պետք է ապահովված լինի տարադրամի արժեզրկումից կամ այլ հիմնախնդիրներից, հակառակ դեպքում, նոր համակարգի ներդրումը կորցնում է իմաստը»:

Անդրադառնալով կուտակային համակարգին քաղաքացիների անցնելու թեմային՝ Օթար Չիծիկաշվիլին նշեց, որ, ցանկության դեպքում, դրան կարող է միանալ ցանկացած քաղաքացի, ընդ որում՝ թե' պետությունը եւ թե' մասնավոր ընկերությունը, որտեղ այդ քաղաքացին աշխատում է, նրան դրանում մերժելու կամ մասնակցությունը սահմանափակելու իրավունք չեն ունենա:

«Ինչ վերաբերում է գործատուին, ապա նա պարտավոր է առանձնացնել լրացուցիչ 2 տոկոսը, եւ այդ հարցով նրան այլընտրանք չի վերապահվում»,- հայտարարեց Օթար Չիծիկաշվիլին:

Նրա խոսքերով, նախնական փուլում կուտակային կենսաթոշակային համակարգում ներգրավման իրավունք կտրվի միայն այն անձանց, ովքեր պաշտոնապես աշխատավարձ են ստանում, իսկ ինչ վերաբերում է ինքնազբաղված քաղաքացիներին, ապա այդ փուլում նրանց ներգրավումը բացառվում է, թեպետ առաջիկայում ծրագրվում է նաեւ նրանց ներգրավումը:

Անդրադառնալով առաջարկվող մոդելի դրական կողմերին՝ փորձագետը նշեց, որ այն շատ ավելի արդարացի ու ձեռնտու է, քանի որ կնպաստի երկրում խնայողությունների ծավալների մեծացմանը, ինչը դրական ազդեցություն կգործի էկոնոմիկայի վրա, թեպետ ընդգծեց նաեւ դրա կիրարկման հետ կապված բարդությունները: «Կուտակային մոդելին անցումն այնքան էլ դյուրին չէ, եւ նախնական փուլում առավելագույնս պետք է հաշվարկվեն հնարավոր ռիսկերը: Միայն դրանց հաշվարկումից հետո, կկարողանանք օպտիմալ համատեղել կենսաթոշակային խառն մոդելների կիրարկումը, ինչը նախատեսում է կենսաթոշակների ապահովում ինչպես բյուջետային միջոցներից, այնպես էլ՝ կուտակումների մեխանիզմների օգտագործումից»,- նշեց նա:

«Սույն համակարգի կարեւորագույն ձեռքբերումն այն է, որ հաշվի է առնում անհատական մոտեցումը, մարդկային գործոնը, ներդրման չափը, որը քաղաքացին կիրականացնի հասարակական կյանքում ու երկրի էկոնոմիկայում: Եվ, ամենակարեւորը, կուտակային համակարգին անցումը նվազագույնի է հասցնում կենսաթոշակային տարիքի քաղաքացիների կախվածությունը կենսաթոշակների հարցում իշխանության կոնկրետ մոտեցումներից եւ իշխանությունների կողմից կենսաթոշակի մեծության գնահատումներից»,- նշեց Օթար Չիծիկաշվիլին:

Նրա խոսքերով, հասարակությունը պետք է հստակորեն գիտակցի, որ պետական կենսաթոշակը երբեք չի հասցվի այնպիսի մակարդակի, որը կկարողանա ապահովել մարդկանց բարեկեցիկ կյանքը:

«Ներկայումս գործող մոդելը նախատեսում է կենսական նվազագույնին կենսաթոշակի մեծության մոտեցումը, ինչը, բնականաբար, բավարար համարել չի կարելի: Ինչ խոսք, բնակչության նշանակալի մասի համար պետական կենսաթոշակը նշանակալի գործոն է, սակայն պետությունը այն անընդհատ մեծացնել ի վիճակի չէ, եւ դա ոչ միայն Վրաստանին յուրահատուկ երեւույթ է, այն ընդհանուր է նույնիսկ շատ ավելի զարգացած երկրների համար»,- ասաց Չիծիկաշվիլին:

Օթար Չիծիկաշվիլու խոսքերով, կուտակային մոդելը երկարաժամկետ ծրագիր է, եւ սպասումները, որ մեկ-երկու կամ առաջիկա տասը տարվա ընթացքում կարող են զգալի ազդեցություն գործել կենսաթոշակային տարիք ունեցող մարդկանց կենսամակարդակի վրա, եթերային են: Մոդելը ավելի շուտ նախատեսված է երիտասարդների համար, ում կտրվի ապահով ապագա ստեղծելու եւ պետության քմահաճույքից անկախանալու հնարավորություն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ